

## Սուսաննա Սերոբյան

### ԲԱԶՄԱՏԵՍԱՆԿՅՈՒՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՈՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր – բազմատեսանկյուն, մարտահրավեր, բազմակերպություն, հաղորդակցություն, փոխներգործություն, բազմանշակությամբ, պատմություն, պատմագիտություն, դասավանդում:

Քսանմեկերորդ դարի մարտահրավեր է կրթության համընդհանրացումը՝ կրթական համակարգը արդի համաշխարհային քաղաքակրթության պահանջմունքների համապատասխանեցնելը: Լինելով հարուստ ազգային ավանդույթների երկիր, ունենալով մտավոր ներուժ՝ հասարակության ժողովրդավարացման պայմաններում Հայաստանը կարիք ունի կրթական առաջավոր համակարգի ձևավորման, որն անհնար է առանց ուսուցման նոր մեթոդների ու մեթոդական հնարների, մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կերաշխավորեն ու կապահովեն դասավանդողների ու սովորողների սերտ համագործակցությունը, վերջիններիս մտավոր - վերլուծական, ստեղծագործական կարողությունների համակողմանի զարգացումը:

Պայմանավորված պատմագիտության կերպափոխություններով և կրթության մարդասիրացման միտումով՝ նոր պահանջներ են դրվում նաև պատմություն դասավանդողի առաջ: Այդ պահանջները փոխկապակցված ու միասնականացված լուրջ մարտահրավերներ են՝ մասնագիտական, մանկավարժական հմտություններ պահանջող:

Քսանմեկերորդ դարում պատմության դասավանդման մեջ նոր մարտահրավեր է բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը: Մինչև 1990-ական թվականները «բազմատեսանկյուն մոտեցում» եզրը հազվադեպ էր օգտագործվում պատմության դասավանդման համատեքստում: Անցած հարյուրամյակի 90-ականների վերջին՝ տնտեսական ու քաղաքական անցումային շրջանում գտնվող երկրների կրթական ծրագրերում Եվրակլիոյի (Եվրոպայի պատմության ուսուցիչների ընկերակցությունների համաժողով կամ Միջնշակությամբ կրթության Եվրոպական դաշինք) կողմից կյանքի կոչվեց բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքը՝ իբրև յուրօրինակ միջոց պատմահայեցողության օբյեկտի ճշգրտման, պատմական երևույթների ու իրադարձությունների պատճառահետևանքային կապերի վերհանման և, առհասարակ, կրթության մարդասիրացման: Հետագոտող Պետեր Ֆրիցշեի դիպուկ բնութագրմամբ բազմատեսանկյուն մոտեցումը կյանքի կոչվեց որպես պատմության «ընկալման

ռազմավարություն», որը թույլ է տալիս ուրիշի տեսակետը ըմբռնելու, պատմական իրողությունները տարբեր դիտանկյուններից քննարկելու ճանապարհով հասկանալ ներկա աշխարհի բազմակերպությունը<sup>1</sup>: Բազմատեսանկյուն մոտեցման հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է այն գիտակցումով, որ մինչ այժմ դասավանդվող պատմությունը եղել է ամենամեծ էթնիկական խմբի կամ տիրապետող լեզվամշակութային համայնքի պատմություն, միամշակութային, էթնոկրատական, ավելի շատ բացառող, քան ընդգրկող, քանի որ ուշադրությունից դուրս է գտնվել առանձին սոցիալական խմբերի (ազգային փոքրամասնություններ, կանայք, չունևորներ, տարագիրներ) պատմության լուսաբանումն ու ուսուցումը: Մինչդեռ այսօր պատմության դասավանդման գործընթացում աշխարհի բազմակերպության ընկալման համար անհրաժեշտ են պատմական երևույթների ու իրադարձությունների հանդեպ բազմակերպ, պլյուրալիստական, ոչ միատեսակ մոտեցումներ: Ունենալ բազմատեսանկյուն մոտեցում, նշանակում է կամենալ և պատրաստ լինել պատմամշակութային իրողությունը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ընդունել, որ ուրիշի տեսակետը (թեկուզ ոչ ճշմարիտ և կողմնակալ) ևս կարող է կարևոր լինել: Կիրառել բազմատեսանկյուն մոտեցում, նշանակում է դասավանդման գործընթացում կարևորել հետևյալ հարցադրումները. ի՞նչ է տեսակետը, ճիշտ է բոլոր տեսակետներն ընդգրկել, թե՞ պետք է ընտրություն կատարել, ընտրության ինչպիսի՞չափանիշներ կիրառել, ընտրել միայն աղբյուրները, թե՞ նաև նրանց մեկնաբանությունները, ինչպե՞ս վարվել, երբ տեսակետերը հակասական են, տեսակետերի բազմազանությունը կապահովի՞ ճշգրիտ պատմության շարադրանք:

Պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը հետապնդում է հետևյալ նպատակները.

Առաջին: «Պատմություն» առարկայի ուսուցումը վերածել ոչ թե փաստերի կույտի ուսուցման, այլ ապահովել հիմնախնդրային ուսուցում: Բազմաթիվ տեսակետերի առկայությունը պարունակում է թվացյալ կամ իրական հակասություն, ինչը սովորողներից պահանջում է ոչ թե պատրաստի գիտելիքներ, այլ որոնումներ, ինքնուրույն դատողություններ և մտածողություն<sup>2</sup>: Հետևապես այս սկզբունքի կիրառումը զարգացնում է սովորողների որոնողական – ճանաչողական հմտությունները:

Երկրորդ: Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսակետերի վերլուծության և համեմատության միջոցով կիրառել տիպաբանացման մոտեցում, այսինքն դեպքերը դարձնել համեմատելի՝ կարևորելով պատճառահետևանքային կապերի վերհանումը:

<sup>1</sup> Տե՛ս Ռոբերտ Ստրադլինգ, Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը, Ուսուցչի ձեռնարկ, Ե., 2008, էջ 14:  
<sup>2</sup> Տե՛ս Հարություն Պապոյան, Պատմության դասավանդման մեթոդիկական դպրոցում, Ե., 2013, էջ 105:

**Երրորդ:** Պատմության ուսուցմանը տալ նպատակասլացություն. պատմական երևույթները կապել առօրյա պրակտիկայի հետ, որպեսզի սովորողները ոչ միայն պատմական գիտելիք ձեռք բերեն, այլև անցյալի փորձի իմաստավորմամբ կարողանան արժևորել ներկան և կանխորոշել ապագան:

**Չորրորդ:** Ղասավանդման գործընթացում կարևորել մշակութային հաղորդակցության, փոխներգործության ու բազմակերպության հիմնախնդիրը, դասավանդողի կողմից պատմությունը ներկայացնել «որպես մշակութային տեքստ՝ համահարաբերակցելու անցյալը, ներկան և ապագան»<sup>1</sup>:

**Հինգերորդ:** Պատմական գործընթացներում կարևորել ոչ թե պատմական օրինաչափությունների բացահայտումը, այլ արժեքների փոխանակումը<sup>2</sup>:

**Վեցերորդ:** Ընդլայնել որոշակի թեմայի կամ երևույթի պատմական վերլուծության շրջանակները՝ նրանում ընդգրկելով սոցիալական այն խմբերի տեսակետերը, որոնք մինչ այդ անտեսվել են և , այդպիսով, ընդլայնել պատմագիտության սահմանները:

**Յոթերորդ:** Սովորողների մեջ ձևավորել էմպատիայի (ներապրումի) հատկանիշ, այսինքն օտարի արարքն ըմբռնելու, իմաստավորելու, նաև սեփական վարքագիծն օտարի վարքագծին հարաբերակցելու ունակություն<sup>3</sup>:

Այս նպատակները դժվար իրագործելի են, մանավանդ կարող են լինել առարկություններ, որ ծանրաբեռնված ուսումնական ծրագրերը, նյութալեցուն դասագրքերը և սահմանափակ դասաժամերը հնարավորություն չեն ընձեռում կիրառել դասավանդման գործընթացում բազմատեսանկյուն մոտեցում: Պատմություն դասավանդողն իրավամբ ունի խնդիր՝ ապահովել գիտելիքի անհրաժեշտ մակարդակ կամ պարզապես իրացնել ուսումնական ծրագիրը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը որքան բարդ, այնքան էլ անհրաժեշտ է , քանի որ կրթության մարդասիրացումն անհնար է առանց սոցիալական խմբերի պատկերացումներն ու սպասումները հաշվի առնելու, նրանց տեսակետերը իմանալու:

Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը ենթադրում է նաև այլ խոչընդոտ. այսօր աճում է պատմությանը նվիրված համացանցային կայքերի թիվը, որոնց շնորհիվ պատմանյութի առավել մեծ զանգված՝ բազմաթիվ տեսակետեր ներկայացնող, դառնում է հասանելի: Հետևապես, պատմաբան – դասավանդողի համար շատ կարևոր ու պարտադիր է օտար լեզուների իմացությունը:

<sup>1</sup> Պատմության ուսուցման նպատակները և խնդիրները հանրակրթական դպրոցում, Կլոր սեղան, <<Պատմություն և կրթություն>>, Ե., 2005, թիվ 1-2, էջ 216:

<sup>2</sup> Տե՛ս Ջոն Քիսթ, Կրոնական բազմազանություն և միջմշակութային կրթություն, ծեռնարկ, Ե., 2008:

<sup>3</sup> Տե՛ս Ս.Սերոբյան, Ղաստիարականության հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում, <<Տարեգիրք>>, Ե., 2010, էջ 131-132:

Մյուս խոչընդոտը. տեսակետերի բազմազանությունը կարող է առաջացնել հիասթափություն պատմություն առարկայից և թերահավատություն պատմական ճշմարտության հանդեպ հատկապես այն սովորողների շրջանում, ովքեր ուսումնառությունը դիտարկում են որպես օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման գործընթաց և առարկայի մեջ փնտրում են ակնհայտ ճշմարտություններ: Սակայն այս դեպքում կարևորվում են դասավանդողի կողմից նույն պատմական իրողության (օրինակ՝ խաչակրաց արշավանքների) վերաբերյալ տարբեր (մահմեդական և քրիստոնեական) վկայությունների ու տեսակետերի ճիշտ, զգայուն հավասարակշռումը և այդ հիմքի վրա պատմական դրվագի վերաիմաստավորումը: Այս խնդրում նրան օժանդակելու է գալիս ուսուցման ժամանակակից մոդելի փոխազդական մեթոդներից մեկը՝ «Դեպքի ուսումնասիրություն» մեթոդը, որը թույլ է տալիս սահմանափակ ձևով աստիճանաբար կիրառել բազմատեսանկյուն մոտեցումը<sup>1</sup>: Դասավանդողը պետք է ընդգծի, որ պատմության մեջ բազմաթիվ տեսակետերի առկայությունը սովորական երևույթ է, որ տեսակետը որպես անձի կանխակալ կարծիք, նախապատվություն, ենթակայական է՝ սեփական ենթադրությունները, գաղափարները, կարծրատիպերն ու սպասումներն արտահայտող: Հարկ է նաև նշել, որ պատմաբաններն իրենց ժամանակի զավակներն են և ունեն հետաքրքրություններ ու նախատրամադրվածություն, նրանց տեսակետերի վրա ազդում է այն հանգամանքը, որ պատկանում են որոշակի սերնդի ու ձգտում են մեկնաբանել անցյալը ժամանակակից տեսանկյունից: Եվ, այնուամենայնիվ, պատմության ու նրա դասավանդման մեջ տեսակետերի բազմազանությունը կարևորվում է պատմությունը ոչ այնքան ճշմարիտ, որքան արդարացի ու բազմակողմանի, բազմաձևակության ներկայացնելու, քննարկվող հիմնահարցի պատմագրության սահմանները ընդլայնելու համար: Սա ժամանակի պահանջ է:

**Сусанна Серобян, К проблеме применения принципа мультикультурного (многоаспектного) подхода - В процессе преподавания истории Евросовет выдвигает принцип мультикультурного (многоаспектного) подхода. В данной статье рассматриваются некоторые стороны этой проблемы и обосновывается важность и необходимость применения этого принципа.**

<sup>1</sup> Մասնավոր դեպքի ուսումնասիրության մեթոդի նկարագրությունը տե՛ս Պատմություն, հասարակագիտություն (կրթակարգ, չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, նյութեր և մեթոդներ ), Ե., 2010:

**Susanna Serobyán, On the problem of applying the principle of a multicultural approach-** The European Council brings forward the multiperspectivity in history teaching. This article discusses some aspects of the problem and grounds the importance and necessity of application of this principle.

**Սուսաննա Սերոբյան - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության անբիռնի ասիստենտ, մեթոդիստ – մանկավարժ:**